

I

ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ  
(Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

*2011 թ. մայիսի 1-ին լրացավ հայրենական գիտության, մասնավորապես ռադիոֆիզիկայի բնագավառի խոշոր գիտնական, գիտակրթական ասպարեզի հմուտ կազմակերպիչ, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ճանաչված հասարակական գործիչ Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանի ծննդյան 75-ամյակը:*



*Ակադեմիկոս Ռ. Մ. Մարտիրոսյանն ընդգրկուն գիտակրթական անխնջ գործունեությամբ վաղուց բարձր գնահատանքի և խորին հարգանքի է արժանացել մտավորականության և հասարակության լայն շրջաններում:*

*Նա այդ վաստակին հասավ կետարյա դժվարին, լարված ու պատասխանատու աշխատանքներում՝ ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի փոխտնօրենի, ավելի քան քառորդ դար տնօրենի, մայր բուհի ռեկտորի, ազգային ակադեմիայի նախագահի պաշտոններում՝ ամենուրեք դրսևորելով անմնացորդ նվիրում, բարձր պատասխանատվություն և հաստատակամություն:*

*Ռ. Մարտիրոսյանի համար բախտորոշ նշանակություն ունեցան ասպիրանտական ուսումնառումը և մասնագիտացումը Մոսկվայում: Նրա գիտական ղեկավարությունը ստանձնեց համաշխարհային անուն վաստակած, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ա. Մ. Պրոխորովը:*

*Խոր ու հիմնավոր պատրաստություն ստանալով՝ հենց այստեղ կատարեց մի շարք գիտական ուշագրավ հետազոտություններ և դարձավ ռադիոաստղագիտության բնագավառում քվանտային ուժեղարարների կիրառման առաջամարտիկներից մեկը: Նրա կողմից մշակված 21 սմ ալիքի երկարություն ունեցող քվանտային ուժեղարարը Խորհրդային Միությունում առաջինն է կիրառվել ռադիոաստղագիտության մեջ:*

*1964 թվականից Ռ. Մարտիրոսյանն իր աշխատանքային գործունեությունը շարունակել է հայրենիքում՝ ՀՀ ԳԱԱ-ի նորաստեղծ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում՝ ստեղծելով գիտական նոր ուղղություն՝ կապված էլեկտրամագնիսական ալիքի գերբարձր հաճախականությունների տարբեր*

տիրույթներում քվանտային ուժեղարարների ստեղծման համար անհրաժեշտ նոր ակտիվ նյութերի ուսումնասիրության հետ: Գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացրել ռելաքսացիոն հավանականությունների վրա հիմնված ակտիվ բյուրեղների ուժեղարարային բնութագրերի որոշման՝ Ռ. Մարտիրոսյանի զարգացրած նոր մեթոդը և այդ մեթոդի վրա հիմնված պարամագնիսական բյուրեղների բազմակողմանի հետազոտությունները:

Ռ. Մ. Մարտիրոսյանն առաջարկել և գործնականում իրականացրել է քվանտային ուժեղարարների էֆեկտիվության մեծացման նոր եղանակներ: Նա առաջինն է հետազոտել երկու տարբեր հաճախություններով ազդանշանների միաժամանակյա ուժեղացում ապահովող ինվերսիայի եղանակը և այն փորձնականորեն իրականացրել այլքի երկարության 21 սմ և 3 սմ տիրույթներում:

Այլքի երկարության միլիմետրանոց տիրույթի քվանտային ուժեղարարների ֆիզիկական հիմունքների հիմնարար հետազոտություններին նվիրված Ռ. Մարտիրոսյանի աշխատանքների շարքն արժանացել է Ուկրաինայի Պետական մրցանակի գիտության և տեխնիկայի ասպարեզում:

Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտն ակտիվորեն մասնակցել է մի շարք միջազգային և միութենական ծրագրերի: Նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծված գերբարձր հաճախականություններով աշխատող բարձր զգայնությամբ ռադիոհամակարգերը լայնորեն կիրառվել են երկրի բնական պաշարների ուսումնասիրման «Ինտերկոսմոս», «Պրիորդա», «Օկեան» տիեզերական ծրագրերում: Բնաստիտուտում մշակված գիտական սարքավորումները հաջողությամբ կիրառվել են ռադիոաստղագիտական, բժշկական սափնական և այլ հետազոտություններում:

Հատկապես արգասաբեր է եղել Ռ. Մարտիրոսյանի մասնակցությունը տիեզերական տարածության ուսումնասիրման ծրագրին, մասնավորապես՝ «Վեգա» նախագծի իրականացմանը:

Մեծ զգայունությամբ ԳԲՀ ընդունիչ համակարգերի մշակման և ներդրման՝ Ռ. Մարտիրոսյանի և նրա աշակերտների աշխատանքների շարքն 1988 թ. գիտության և տեխնիկայի ասպարեզում արժանացել է ՀՀ Պետական մրցանակի:

Սկսած 1987 թ.՝ ՌՖԷԻ-ում Ռ. Մարտիրոսյանի գիտական ղեկավարությամբ կատարվել են բարձրջերմաստիճանային գերհաղորդականությանը նվիրված հիմնարար և կիրառական բնույթի հետազոտություններ:

Ռ. Մարտիրոսյանը ստեղծել է իր գիտական դպրոցը: Նա իր բեղմնավոր գիտական գործունեությունը մշտապես զուգակցել է մանկավարժական աշխատանքի հետ:

1965 թվականից մինչ օրս Ռ. Մարտիրոսյանը ԵՊՀ-ում դասավանդում է ռադիոֆիզիկայի ընդհանուր և հատուկ դասընթացներ: Նրա նախաձեռնությամբ 1983 թ. ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում ստեղծվել է ԳԲՀ ռադիոֆիզիկայի ամբիոն (ներկայումս՝ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոն),

որը Ռ. Մարտիրոսյանը ղեկավարում է մինչ օրս:

1993 թ. ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը նշանակվել է Երևանի պետական համալսարանի ռեկտոր: Կարճ ժամանակում նա մշակել է գիտական հետազոտությունների և կրթության նյութատեխնիկական բազայի զարգացման հետ կապված դժվարությունների հաղթահարման և բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման ծրագրեր:

Նրա ղեկավարման տարիներին ԵՊՀ-ում բացվել են նոր մասնագիտացումներ և ֆակուլտետներ, ուսանողության թիվն աճել է շուրջ երկու անգամ:

Օգտվելով անկախության ընձեռած հնարավորություններից՝ Ռ. Մարտիրոսյանը կապեր հաստատեց և արդյունավետ համագործակցություն ստեղծեց տարբեր երկրների մի շարք նշանավոր համալսարանների հետ:

Անգամ ռեկտորների խորհուրդը, որն անվանական, ձևական մի կազմակերպություն էր, նրա նախաձեռնության շնորհիվ դարձավ գործուն ու կենսունակ հաստատություն:

2006 թ. Ռ. Մարտիրոսյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահ: Հետխորհրդային տարածքում գիտության և գիտական գործունեության խաթարված վարկը, թերֆինանսավորումը, մասնագետների արտահոսքը պահանջում էին ակադեմիայի կառուցվածքի օպտիմալացման, նոր պայմաններում գիտական հետազոտությունների իրավական հենքի ստեղծման, զարգացման հեռանկարային ուղղությունների կանխորոշման հետ կապված վերափոխումներ:

Անցած հինգ տարիների ընթացքում ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ և ակտիվ մասնակցությամբ կատարվեցին կարևոր քայլեր ակադեմիական հանրության համախմբման, ՀՀ ԳԱԱ համակարգի, նրա ներուժի պահպանման գործում: Դրանք ներառում են օրենսդրական ծրագրի իրականացման, տնօրենների կորպուսի երիտասարդացման, հեռանկարային գիտական ուղղությունների ճշգրտման, միջազգային համագործակցության, նոր տեխնոլոգիաների ներդրման և այլ ոլորտներ: Մշակվել և Ազգային ժողովի կողմից հաստատվել է ՀՀ ԳԱԱ-ի մասին օրենքը և ճշտվել է նրա հատուկ կարգավիճակը:

Ռ. Մարտիրոսյանն ավելի քան 200 գիտական աշխատությունների, Շվեդիայում և ԱՄՆ-ում հրատարակված երկու մենագրությունների հեղինակ է: Հայրենական բարձրագույն կրթությանն ու գիտությանը մատուցած նրա անգնահատելի ծառայությունների, ինչպես նաև հասարակական ակտիվ գործունեության համար ակադեմիկոսն արժանացել է բազմաթիվ մրցանակների, մեդալների և շքանշանների, պատվոգրերի ու շնորհակալագրերի: Նրա գիտակազմակերպական ու մանկավարժական գործունեությունն արժանացել է Խորհրդային Միության, Հայաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի բարձր կառավարական պարգևների: Նա պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց», «Հոկտեմբերյան հեղափոխություն» և «Պատվո նշան» շքանշաններով:

*Գիտական հասարակությունը, բարեկամները և գործընկերները սրտանց շնորհավորում են Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանի փառավոր հոբելյանը և ցանկանում առողջություն ու ստեղծագործական նոր հաջողություններ:*

ՅՈՒՐԻ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս,*

ՅՈՒՐԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի  
բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար,  
ակադեմիկոս*

«Գիտություն», մայիս, -5, 2011 թ.